ԵԴ1/2027/01/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15 հոկտեմբերի 2024 թվական քաղաք Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԵԴ1/2027/01/24 քրեական վարույթի տարածքային ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2024 թվականի հոկտեմբերի 2-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը</u>.

1. 2021 թվականի մարտի 31-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է թիվ 69100821 (ԵԴ/0388/01/21) քրեական գործն ըստ մեղադրանքի Արտուշ Ռուզվելտի Ֆարոյանի՝ 2003 թվականի ապրիլի

18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ նաև ՀՀ քրեական օրենսգիրք) 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 268-րդ հոդվածի 3-րդ մասով, Արման Սերյոժայի Ոսկանյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով և 38-268-րդ հոդվածի 3-րդ մասով, Աշոտ Միքաելի Պետրոսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2021 թվականի ապրիլի 1-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ/0388/01/21 քրեական գործը վարույթ ընդունելու մասին:

2021 թվականի մայիսի 6-ին թիվ ԵԴ/0388/01/21 քրեական գործը վերաբաշխվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա.Դանիբեկյանին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի մայիսի 7-ի որոշմամբ քրեական գործն ընդունվել է վարույթ և 2021 թվականի մայիսի 17-ին որոշում է կայացվել դատական քննություն նշանակելու մասին:

2024 թվականի օգոստոսի 26-ին թիվ ԵԴ/0388/01/21 քրեական գործը ԵԴ1/2027/01/24 համարի ներքո վերաբաշխվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Դ.Բալայանին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի օգոստոսի 29-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/2027/01/24 քրեական վարույթն ստանձնելու և 2024 թվականի սեպտեմբերի 12-ին նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 12-ին որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելու մասին:

3. Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի հոկտեմբերի 2-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/2027/01/24 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի հոկտեմբերի 10-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների փաստական և իրավական նկարագրությունը.</u>

5. Նախաքննության մարմնի որոշմամբ Արտուշ Ռուզվելտի Ֆարոյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 268-րդ հոդվածի 3-րդ մասով այն բանի համար, որ *«նա, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի պահանջները և ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» թիվ 270-Ն որոշման պահանջները, Արման Սերյոժայի Ոսկանյանի օժանդակությամբ թմրամիջոցի ապօրինի ձեռք բերման հարցում նախօրոք ստացված պայմանավորվածության համաձայն՝ 2019 թվականի հունիսի 7-ին Արագածոտնի մարզի Կոշ համայնքում հանդիպել է վերջինիս հետ, իր խնդրանքով և դրամական միջոցներով՝ 100.000 ՀՀ դրամով, Արման Սերյոժայի Ոսկանյանը գործով չպարզված անձից ապօրինի ձեռք է բերել 2018 թվականի հունիսի 27-ի ՀՀ Կառավարության N 707-Ն որոշման 1-ին հավելվածի ցանկի 15-րդ կետով սահմանված առաձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր՝ 13.55 գրամ վերջնական քաշով ինքնաշեն եղանակով պատրաստված «Ափիոն» տեսակի թմրամիջոց, փոխանցել Արտուշ Ռուզվելտի Ֆարոյանին, ով էլ ապօրինի ձեռք բերված թմրամիջոցն ապօրինի պահել է իր կաշվե բաճկոնի թևքի մեջ, ինչն էլ հայտնաբերվել և վերցվել է 2019 թվականի հունիսի 7-ին՝ ժամը 20:45-ին, Արտուշ Ֆարոյանին Գյումրի քաղաքի Ռասկալտյան փողոցի 34/1 հասցեի դիմացից ՀՀ ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի աշխատակիցների կողմից թմրամիջոց ապօրինի պահելու և օգտագործելու կասկածանքով ոստիկանության Կումայրիի բաժին բերման ենթարկելուց հետո՝ այնտեղ կատարված վերջինիս անձնական խուզարկությամբ:*

(…)

Բացի այդ, Արտուշ Ռուզվելտի Ֆարոյանը, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի պահանջները և ՀՀ Կառավարության 2010 թվականի մարտի 18-ի «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» թիվ 270-Ն որոշման պահանջները, գործով չպարզված անձից, ժամանակահատվածում և հանգամանքներում, թմրամիջոցների ապօրինի շրջանառությամբ զբաղվելու միասնական դիտավորությամբ, իրացնելու նպատակով ապօրինի ձեռք է բերել առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 8.52 գրամ քաշով «Ամֆետամին» տեսակի թմրամիջոց և 2020 թվականի փետրվար ամսվա վերջերից մինչ 2020 թվականի մարտ ամսվա սկիզբն ընկած ժամանակահատվածում, Աշոտ Միքայելի Պետրոսյանին մաս-մաս ապօրինի իրացրել է 2018 թվականի հունիսի 27-ի ՀՀ Կառավարության N 707-Ն որոշման 1-ին հավելվածի ցանկի 13-րդ կետով սահմանված առանձնապես խոշոր չափերի՝ 1.98 գրամ քաշով «Ամֆետամին» տեսակի թմրամիջոց, որը 2020 թվականի մարտի 12-ին քննչական մարմնի աշխատակցի կողմից վերցվել է Աշոտ Պետրոսյանի բնակության վայր հանդիսացող՝ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոցի 164 տանը կատարված դեպքի վայրի զննությամբ՝ վեջինիս կողմից ներկայացնելուց հետո: Որից հետո Արտուշ Ռուզվելտի Ֆարոյանը, 2020 թվականի մարտի 9-ին Լոռու մարզի Մեծ Պարնի գյուղում գտնվող փոստային բաժանմունքի հետնամասում Աշոտ Միքայելի Պետրոսյանին 15.000 ՀՀ դրամով ապօրինի իրացրել է 2018 թվականի հունիսի 27-ի ՀՀ Կառավարության N 707-Ն որոշման 1-ին հավելվածի ցանկի 13-րդ կետով սահմանված առանձնապես խոշոր չափերի՝ 3.91 գրամ քաշով «Ամֆետամին» տեսակի թմրամիջոց, որը հայտնաբերվել է նույն օրը Աշոտ Պետրոսյանին ոստիկանություն բերման ենթարկելուց հետո Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոցի 235 շենքից մոտ 10 մետր հեռավորության վրա գտնվող փողոցի երթևեկելի մասում կատարված դեպքի վայրի զննությամբ: Այնուհետև, Արտուշ Ռուզվելտի Ֆարոյանը, 2020 թվականի մարտի 10-ին Լոռու Մարզի Մեծ Պարնի գյուղում Աշոտ Միքայելի Պետրոսյանին ապօրինի իրացրել է 2018 թվականի հունիսի 27-ի ՀՀ Կառավարության N 707-Ն որոշման 1-ին հավելվածի ցանկի 13- րդ կետով սահմանված առանձնապես խոշոր չափերի՝ 2.63 գրամ գրամ քաշով «Ամֆետամին»

տեսակի թմրամիջոց, որը 2020 թվականի մարտի 11-ին հայտնաբերվել է Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոցի 164 տանը կատարված խուզարկությամբ: (…)»[1]:

5.1. Նախաքննության մարմնի որոշմամբ Արման Սերյոժայի Ոսկանյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով, 38-268-րդ հոդվածի 3-րդ մասով այն բանի համար, որ *«նա, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի պահանջները և ՀՀ Կառավարության 2010 թվականի մարտի 18-ի «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» թիվ 270-Ն որոշման պահանջները, Արտուշ Ռուզվելտի Ֆարոյանին թմրամիջոցի ապօրինի ձեռք բերման հարցում օժանդակելու նպատակով նրա խնդրանքով և դրամական միջոցներով՝ 100.000 ՀՀ դրամով, 2019 թվականի հունիսի 7-ին գործով չպարզված անձից, ժամանակահատվածում և հանգամանքներում, ապօրինի ձեռք է բերել առնվազն առանձնապես խոշոր չափերի՝ «Ափիոն» տեսակի թմրամիջոց, և նախօրոք ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ 2019 թվականի հունիսի 7-ին Արագածոտնի մարզի Կոշ համայնքում հանդիպել է Արտուշ Ռուզվելտի Ֆարոյանի հետ և նրան փոխանցել է 2018 թվականի հունիսի 27-ի N 707-Ն որոշման 1-ին հավելվածի ցանկի 15-րդ կետով սահմանված առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր՝ 13.55 գրամ վերջնական քաշով ինքնաշեն եղանակով պատրաստված «Ափիոն» տեսակի թմրամիջոց, ինչն էլ հայտնաբերվել և վերցվել է 2019 թվականի հունիսի 7-ին՝ ժամը 20:45-ին, Արտուշ Ֆարոյանին Գյումրի քաղաքի Ռասկալտյան փողոցի 34/1 հասցեի դիմացից ՀՀ ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնի աշխատակիցների կողմից թմրամիջոց ապօրինի պահելու և օգտագործելու կասկածանքով ոստիկանության Կումայրիի բաժին բերման ենթարկելուց հետո՝ այնտեղ կատարված վերջինիս անձնական խուզարկությամբ:*

(…)

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 9, թերթեր 238-239:

Բացի այդ, Արման Սերյոժայի Ոսկանյանը, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի պահանջները և ՀՀ Կառավարության 2010 թվականի մարտի 18-ի «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» թիվ 270-Ն որոշման պահանջները, չպարզված անձից, ժամանակահատվածում և հանգամանքներում, ապօրինի ձեռք է բերել ՀՀ Կառավարության 2018 թվականի հունիսի 27-ի N 707-Ն որոշման 1-ին հավելվածի ցանկի 15-րդ կետով սահմանված առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 13,4 գրամ հաստատուն չոր քաշով «Ափիոն» տեսակի թմրամիջոց և ծխախոտի տուփի մեջ դրված ապօրինի պահել է Արագածոտնի մարզի Կոշ համայնքի 1-ին փողոցի 11-րդ փակուղու 1-ին հասցեում, սակայն 2020 թվականի մարտի 24-ին կայացված որոշման հիման վրա նույն օրը Արման Սերյոժայի Ոսկանյանին ձերբակալելու ընթացքում նրա որդին՝ 16.04.2005 թվականին ծնված Սերգեյ Արմանի Բաղդասարյանը, առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 13,4 գրամ հաստատուն չոր քաշով «Ափիոն» տեսակի թմրամիջոցով լցված ծխախոտի տուփը Արագածոտնի մարզի Կոշ համայնքի 1-ին փողոցի 11-րդ փակուղու 1-ին հասցեից վերցրել և ուսումնական աշխատակիցներից աննկատ տեղափոխել և դրել է այգու եզրամասում գտնվող ծառի տակ, ինչն էլ նույն օրը առգրավվել է քննչական խմբի անդամ քննիչի կողմից: (…)»[2]:

5.2. Նախաքննության մարմնի որոշմամբ Աշոտ Միքաելի Պետրոսյանը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով այն բանի համար, որ *«նա, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի պահանջները և ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 18-ի «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» թիվ 270-Ն որոշման պահանջները, միասնական դիտավորությամբ, իր անձնական օգտագործման նպատակով ապօրինի ձեռք է բերել առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 6,54 գրամ քաշով «Ամֆետամին» տեսակի*

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 10, թերթեր 22-23:

թմրամիջոց, մասնավորապես, 2020 թվականի մարտի 9-ին Լոռու մարզի Մեծ Պարնի գյուղում գտնվող փոստային բաժանմունքի հետնամասում Արտուշ Ռուզվելտի Ֆարոյանից 15.000 ՀՀ դրամով առանց իրացնելու նպատակի ապօրինի ձեռք է բերել 2018 թվականի հունիսի 27-ի ՀՀ Կառավարության N 707-Ն որոշման 1-ին հավելվածի ցանկի 13-րդ կետով սահմանված առանձնապես խոշոր չափերի՝ 3.91 գրամ քաշով «Ամֆետամին» տեսակի թմրամիջոց, որը հայտնաբերվել է նույն օրը Աշոտ Պետրոսյանին ոստիկանություն բերման ենթարկելուց հետո Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոցի 235 շենքից մոտ 10 մետր հեռավորության վրա գտնվող փողոցի երթևեկելի մասում կատարված դեպքի վայրի զննությամբ: Այնուհետև, Աշոտ Միքաելի Պետրոսյանը 2020 թվականի մարտի 10-ին Լոռու Մարզի Մեծ Պարնի գյուղում Արտուշ Ռուզվելտի Ֆարոյանից առանց իրացնելու նպատակի ապօրինի ձեռք է բերել 2018 թվականի հունիսի 27-ի ՀՀ Կառավարության N 707-Ն որոշման 1-ին հավելվածի ցանկի 13-րդ կետով սահմանված առանձնապես խոշոր չափերի՝ 2,63 գրամ քաշով «Ամֆետամին» տեսակի թմրամիջոց և ապօրինի պահել իր բնակության վայր հանդիսացող Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոցի 164 տանը, որը 2020 թվականի մարտի 11-ին հայտնաբերվել է նշված տանը կատարված խուզարկությամբ: (…)»[3]*:*

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024 թվականի սեպտեմբերի 12-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Կոնկրետ դեպքում, մեղադրյալներին առաջադրված մեղադրանքների բովանդակությունից հետևում է, որ ենթադրյալ հակահիրավական արարքները կատարվել են ՀՀ Շիրակի, Արագածոտնի, Լոռու և Տավուշի մարզերում: Մեղադրանքի համաձայն վերջին արարքը տեղի է ունեցել՝ 2020 թվականի մարտի 12-ին, մասնավորապես. Աշոտ Պետրոսյանի բնակության վայր հանդիսացող Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոցի 164-րդ տանը կատարված դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել է 1.98 գրամ քաշով «Ամֆետամին» տեսակի թմրամիջոցը, այսինքն՝ ենթադրյալ վերջին հանցանքը ավարտվել է ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական*

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 9, թերթեր 213-214:

տարածքում: Հետևաբար, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի իրավակարգավորումների համաձայն՝ սույն քրեական գործն ընդդատյա է ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին: (…)»[4]*:*

7. Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի հոկտեմբերի 2-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Արտուշ Ֆարոյանի, Արման Ոսկանյանի և Աշոտ Պետրոսյանի կողմից ենթադրյալ հանցավոր արարքները կատարվել են ՀՀ Շիրակի, Տավուշի, Արագածոտնի և Լոռու մարզերում:*

Արտուշ Ֆարոյանին, Արման Ոսկանյանին և Աշոտ Պետրոսյանին ներկայացված մեղադրանքի համաձայն՝ վերջին արարքը կատարվել է 2020 թվականի մարտի 24-ին: Մասնավորապես՝ Արման Ոսկանյանը չպարզված անձից, ժամանակահատվածում և հանգամանքներում, ապօրինի ձեռք է բերել առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 13,4 գրամ հաստատուն չոր քաշով «Ափիոն» տեսակի թմրամիջոց և ծիածիտրի տուփի մեջ դրված ապօրինի պահել է Արագածոտնի մարզի Կոշ համայնքի 1-ին փողոցի 11-րդ փակուղու 1-ին հասցեում, սակայն 2020 թվականի մարտի 24-ին կայացված որոշման հիման վրա նույն օրն Արման Սերյոժայի Ոսկանյանին ձերբակալելու ընթացքում նրա որդի Սերգեյ Արմանի Բաղդասարյանն առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 13,4 գրամ հաստատուն չոր քաշով «Ափիոն» տեսակի թմրամիջոցով լցված ծիածիտրի տուփն Արագածոտնի մարզի Կոշ համայնքի 1-ին փողոցի 11-րդ փակուղու 1-ին հասցեից վերցրել և ոստիկանության աշխատակիցներից աննկատ տեղափոխել և դրել է այգու եզրամասում գտնվող ծառի տակ, ինչն էլ նույն օրն առգրավվել է քննչական խմբի անդամ քննիչի կողմից:

Այսինքն՝ ենթադրյալ վերջին հանցանքը չի կատարվել ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:

Մինչդեռ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը քրեական վարույթն ըստ ընդդատության փոխանցելու մասին

---

[4] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 13, թերթեր 167-170:

12.09.2024 թվականի որոշմամբ արձանագրել է, որ վերջին արարքը տեղի է ունեցել 2020 թվականի մարտի 12-ին, երբ Աշոտ Պետրոսյանի բնակության վայր հանդիսացող Տավուշի մարզի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոցի 164-րդ տանը կատարված դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել է 1.98 գրամ քաշով «Ամֆետամին» տեսակի թմրամիջոցը:

Վերոգրյալի հաշվառմամբ, Դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում վարույթն ընդդատյա է այն դատարանին, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը, որը սույն դեպքում չի հանդիսանում ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքը: (...)»[5]*:*

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/2027/01/24 քրեական վարույթն ընդդատյա չէ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում,*

[5] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 13, թերթեր 182-187:

որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»[6]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[7]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հատակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը

---

[6] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[7] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

նախապրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[8]*:*

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած է ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին՝ անկախ քննչական ենթակայության կանոններից:*

2. Եթե վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված

---

[8] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

երկու կամ ավելի հանցանքներին, ապա մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը: (...)»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *« 1. Նախնական դատաքննության ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(...)

4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:

(...)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (...)»:

13.1. Վերոգրյալ իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից բխում է, որ քրեական վարույթի ընդդատության ընդհանուր կանոնն այն է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին ընդդատյա են այն վարույթները, որոնք վերաբերում են այդ դատարանի դատական տարածքում ենթադրաբար կատարված հանցանքներին: Միևնույն ժամանակ, օրենսդիրն առանձին կարգավորում է նախատեսել այն դեպքերի համար, երբ վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու կամ ավելի հանցանքներին, ամրագրելով, որ այդ դեպքերում մեղադրանքը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ սույն վարույթով վերջին հանցանքն ավարտվել է 2020 թվականի մարտի 12-ին՝ Աշոտ Պետրոսյանի բնակության վայրում՝ Տավուշի մարզի

Դիլիջան քաղաքի Կալինինի փողոցի 164-րդ տանը, կատարված դեպքի վայրի զննությամբ 1.98 գրամ քաշով «Ամֆետամին» տեսակի թմրամիջոցը հայտնաբերելով, գտել է, որ սույն վարույթն ընդդատյա է Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին[9]:

- Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը գտել է, որ սույն վարույթով ենթադրյալ վերջին հանցանքն ավարտվել է 2020 թվականի մարտի 24-ին՝ Արագածոտնի մարզի Կոշ համայնքի 1-ին փողոցի 11-րդ փակուղու 1-ին հասցեից առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 13,4 գրամ հաստատուն չոր քաշով «Ափիոն» տեսակի թմրամիջոցով լցված ծխախոտի տուփը քննիչի կողմից առգրավվելու պահից[10]:

15. Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով վերոշարադրյալ իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ թիվ ԵԴ1/2027/01/24 քրեական վարույթը վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության տարբեր դատարանների դատական տարածքներում ենթադրաբար կատարված երկու և ավելի հանցանքներին, հետևաբար մեղադրանքը պետք է քննի այն դատարանը, որի դատական տարածքում ենթադրաբար կատարվել է վերջին հանցանքը: Տվյալ դեպքում մեղադրյալներին առաջադրված մեղադրանքների համաձայն՝ սույն վարույթով վերջին ենթադրյալ հանցանքն ավարտվել է 2020 թվականի մարտի 24-ին՝ մեղադրյալ Ա.Ոսկանյանի կողմից ենթադրաբար ապօրինի ձեռք բերված և պահվող՝ առանձնապես խոշոր չափերի «Ափիոն» տեսակի թմրամիջոցով լցված ծխախոտի տուփը Արագածոտնի մարզի Կոշ համայնքի 1-ին փողոցի 11-րդ փակուղու 1-ին հասցեից քննիչի կողմից առգրավվելու պահից: Հետևաբար, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն վարույթով ենթադրյալ վերջին հանցանքն ավարտվել (կատարվել) է Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:

16. Վերոշարադրյալի հիման վրա, Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

---

[9] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[10] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/2027/01/24 քրեական վարույթն ընդդատյա չէ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին, հիմնավոր է:

Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ թիվ ԵԴ1/2027/01/24 քրեական վարույթն ընդդատյա է Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտուշ Ռուզվելտի Ֆարոյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 268-րդ հոդվածի 3-րդ մասով, Արման Սերյոժայի Ոսկանյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով և 38-268-րդ հոդվածի 3-րդ մասով, Աշոտ Միքաելի Պետրոսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով թիվ ԵԴ1/2027/01/24 քրեական վարույթն ընդդատյա է Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ